ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1479-Ա

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005 թվականի թիվ 2408-Ն որոշման հավելված 1-ի սահմանված կարգի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի 596-Ն որոշման 108-րդ կետով և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից 10.11.2026թ. տրված ՇԹԴ/102/30128-26 դիմում-հայտը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Բավարարել Էդմոն Մխիթարյանի կողմից տրված դիմում-հայտը և փոփոխել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Գարդմանի փողոց 48 հողամաս հասցեում նոր կառուցվող ավտոտեխսպասարկման կայանի կառուցման աշխատանքների կատարման նպատակով Ճամբարակ համայնքի կողմից 01.04.2026 թվականին տրված ՇԹ/102/24936-26 շինարարության թույլտվությունը և հաստատել փոփոխված նախագծային փաթեթները:
2. Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ կառուցապատողը պարտավոր է դիմել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 11
ք. Ճամբարակ